

Մ. Ն. Հակոբյան

ԶՄՅՈՒՆԻԱԼԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐ ԳՐԻԳՈՐ ՄՍԵՐՅԱՆԸ ԵՎ ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐՅԱՆԸ

Զմյուռնիան երկար ժամանակ եղել է արևմտահայ մշակույթի կարևոր կենտրոններից մեկը: Կ. Պոլսից հետո ծովափնյա այդ քաղաքը դարձել էր թուրքահայ գրքի, մամուլի և կրթական գործի մի յուրօրինակ օրորան:

XIX դ. զմյուռնահայ առաջադեմ մտավորականությունն ամենաակտիվ մասնակցությունն ուներ գաղութահայ մշակույթային կյանքում, կրթութուն համարձակ պայքար էր մղում կղերա-պաշտպանական գաղափարախոսության դեմ, մասնավորապես եռանդուն ջանքեր գործադրում աշխարհաբարի հաղթանակի օգտին: Այդ մտավորականության մի որոշ մասի գործունեության վրա որոշակի ներգործություն է թողել ռևոլյուցիոն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը, որ հանդիպում է ունեցել զմյուռնահայ մի խումբ երիտասարդ գործիչների հետ:

Զմյուռնայում են ծավալել իրենց գործունեությունը Ստեփան Ոսկանը, Դրիգոր Զիլինկիրյանը, Արմենակ Հայկունին, Գալուստ Կոստանդյանը, Մառթեոս Մամուրյանը և ուրիշներ: Մեր այս հոդվածը նվիրված է զմյուռնահայ մտավորականների այդ սերնդին պատկանող երկու ներկայացուցիչների՝ Դրիգոր Մսերյանի և Մեսրոպ Նուպարյանի 70—80-ական թվականների գործունեությանը, որ պատշաճ ուշադրության չի արժանացել մեր բանասերների և պատմաբանների կողմից:

ԳՐԻԳՈՐ ՄՍԵՐՅԱՆ

Դրիգոր Մսերյանը ծնվել է Զմյուռնիայի Պուտնովա թաղամասում 1816 թվականին: Նրա հայրը Մսեր Մագիստրոսի եղբայրն էր, իսկ մայրը՝ Մարկոս Աղաբեկյանի քույրը: Մեզ հայտնի աղբյուրները տեղեկություն չեն տալիս Գ. Մսերյանի ծնողների զբաղմունքի մասին: Հավանական է, որ նրա հայրը Զմյուռնիայի գավառական վաճառականներից մեկն էր: Մի շարք վկայություններից պարզվում է, որ Դրիգորի հայրը հարուստ ժառանգություն չի թողել որդուն: Դրա փոխարեն նա հոգ է տարել որդու կրթության ու դաստիարակության մասին: Դրիգորը սկզբում սովորել է Մ. Աղաբեկյանի և Մ. Մամուրյանի՝ Թուսսոյի մանկավարժական սկզբունքներով գործող վարժարանում (1853), ապա Մեսրոպյան դպրոցում ու Վիեննայի Մխիթարյանների մոտ: Նա տիրապետում էր ֆրանսերենին և եվրոպական այլ լեզուների, հայտնի էր իբրև գիտելիքներով զինված մտավորական:

Աշխատանքային իր գործունեությունը Մսերյանը սկսել է առևտրով և միևնույն կյանքի վերջն էլ, մերթ երկարատև, մերթ կարճատև ընդհատումներով, զբաղվել է դրանով: Բայց Մսերյանը, ինչպես վկայում են նրա շատ ժամա-

նականիքներ, անհաջող առևտրական էր, «Ակամա վաճառականի» ամենասիրած զրադմունքը եղել է գրականությունը, որին նա հաճախ նվիրվում էր ինքնամոռացությամբ, նույնիսկ ընտանիքին նյութական դժվարություններ պատճառելու գնով:

Գրական ասպարեզում Մսերյանի անունն առաջին անգամ երևացել է 70-ական թվականներին, երբ «Արևելյան մամուլի» 1871 թվականի համալսերում (№ № 1—3, 6—10) հրատարակվում է «Ծշմարտության վրա գրավ մշ» երկը: Որոշ աղբյուրներ այն դասում են Մսերյանի ինքնուրույն գործերի թվում, մինչդեռ երկասիրությունն ավարտվում է «Հետևություն ֆրանսերենի» արժանատիությամբ: Հաջորդ տարում Մսերյանն արդեն հանդես եկավ ինքնուրույն ուսումնասիրությամբ:

«Արևելյան մամուլի» № 12-ից սկսած (1872 թ.) նա հրատարակեց «Լեզվի վրա» խորագրով հետաքրքրական հոդվածաշարը: Դրանով Մսերյանը մասնակցում է «Մասիսի» էջերում աշխարհաբարի շուրջը բացված բանավեճին և հսկադրվում Արմաշի վանքի ոչ անհայտ կղերական Խ. Աշրգյանին: Այդ հոդվածներում աշխարհաբարի ջերմ պաշտպան Սյունին (Գ. Մսերյանն ստորագրել է նաև Գր. Մսեր., Գ. Մ., Ասողիկ ծածկանուններով) հանդես է բերում լեզվի զարգացման գիտական ըմբռնում, սուր քննադատության կրակի տակ է առնում լեզվի մասին կրոնի քարոզած հակագիտական տեսությունը: Նա գտնում է, որ թե լեզուն և թե քերականությունը թերություններ ունեն և շարունակ լրացվում են նոր ոճերով ու կանոններով: «Ամեն մեկ ազգի կամ ժողովրդյան լեզուն իր աճման պատմությունն ունի նույն ժողովրդյան նյութական, մտային և քաղաքական փոփոխություններու պատմության հետ: Լեզուն փոխված է դարեդար և օրեօր...», «Լեզուն,— հակադրվելով կղեր ընդդիմախոսին ընդգծում է նա,— գործիք մ'է և չէ՝ թե մասունք, գիտություն մ'է և հետևաբար առաջադիմության և մշակության ընդունակ. ուստի անշարժության այս սկզբունքը, որ վանական կյանքի քնական հետևություն պետք է ըլլա և որ տեսակ մը հնասիրության ներքև կսքողի, չենք կրնար ընդունիլ»: Լեզուն «մեր աստանդական եղբարց հետ միացնող միակ կապն» է, որը սակայն «վերանորոգման և մշակության պետք ունի դարուս առաջադիմության համապատասխանելու համար»:

Մասնակցելով գրաբարամուլների դեմ՝ հանուն աշխարհաբարի պաշտպանության ծավալված պայքարին, որ տևել է մինչև դարավերջը, «ջերմ աշխարհաբարյանը» գնում էր այն ուղիով, որով ընթացել էին Մ. Նալբանդյանը՝ Արեւվելահայաստանում և Հ. Սվաճյանը՝ Արևմտյան Հայաստանում: Այդ պայքարին նա գործնական մասնակցություն ցույց տվեց ոչ միայն լեզվի մասին հայտնած իր կարծիքներով և կղերա-ֆեոդալական հոսանքի ներկայացուցիչներին մերկացնելով (տես նաև «Հույս հանդեսն ու լեզվի խնդիրը» հոդվածը «Արևելյան մամուլի» 1875—1876 թթ. համարներում), այլև զինակցելով առաջադիմական այն բանակին, որ եվրոպական գրողների երկերը թարգմանում և հայ ընթերցողներին էր մատուցում աշխարհաբար հայերենով:

«Ծաշակավոր լեզվաբանը» (ըստ Ստ. Ոսկանի) 70-ական թվականին մասնում է Տետեյան տպարանի (1851—93 թթ.) շուրջը զմյուռնահայ հայտնի գործիչներ Մ. Մամուրյանից, Գ. Զիլինկիրյանից, Գ. Կոստանդյանից, Մ. Նուպարյանից և ուրիշներից կազմված թարգմանչական խմբակի մեջ: Արևմտահայ

¹ Տե՛ս «Արևելյան մամուլ», 1872, № 12, էջ 540—543 և 1873, № 1, էջ 12—17:

գրագետների թարգմանչական գործունեության, նրանց թվում նաև Զմյուռնիայի այդ առաջադեմ թարգմանիչների կատարած լուսավորական աշխատանքի նշանակությունը բավականաչափ մեծ է արևմտահայ հասարակական մտքի զարգացման գործում: Այդ գործունեությանը լեզվագիտական տեսնակյունից մոտենալով և ֆրանսիական վեպերի թարգմանության մասին խոսելով, ակադեմիկոս Հրաչյա Աճառյանը նկատում է. «Ժողովուրդը կարդաց, լսեց այդ վեպերը անհուն հետաքրքրությամբ, ընթերցանությունը պահանջ դարձավ և այդ ընթերցանության արդյունքն եղավ աշխարհաբար գրական հայերենի համատարած ուսումը»¹:

Գրիգոր Մսերյանի, Մեսրոպ Նուպարյանի և այլոց կատարած դերը ճիշտ ըմբռնելու և գնահատելու համար հարկավոր է հիշել, որ արևմտահայ իրակա-
նության մեջ 70—80-ական և դեռ 90-ական թվականներին էլ տակավին շա-
րունակվում էր դարակեսին սկսված բուռն բանակռիվը՝ աշխարհաբարի և գրա-
բարի շուրջը: Գրաբարի կողմնակիցները պնդում էին, թե աշխարհաբարը «...մի
յեղու չէ, այլ բազմաթիվ բարբառներ ունի և հայտնի չէ. թե ում պետք է տալ
իրավունքը. նա լցված է ուսման բառերով ու ձևերով. այնքան բազմաթիվ օտար
բառեր ու ոճեր ունի, որ հայերեն չէ. լի է սխալներով. աղքատ, տկար, անշուք
լեզու է. ...անկանոն է, այսինքն՝ շունի քերականական ձևերի միօրինակ-
ություն. ...մոթ լեզու է, շունի գրաբարի պարզությունը. բարդ բառերի կազ-
մության մեջ ճաշակ չի դրած. ...սովորել ավելի դժվար է, քան թե գրաբարը»²:

Ավելին. այդ մի ժամանակաշրջան էր, երբ գրաբարամուլներն ամենայն
լրջությամբ հայտարարում էին, թե «աշխարհաբարը պաշտպանել հակառակ է
ազգասիրության» կամ թե գրաբարը հռչակում էին իրեն աստծու կողմից Արա-
մին տրված և Նոյի ու Հայկի միջոցով մեզ հասած լեզու և նրա դեմ խոսողին
համարում էին լուսավորչական հայ եկեղեցու թշնամի: Տակավին 1886-ին էր.
որ գրաբարի կողմնակիցները դեռ ճակատամարտ էին տալիս՝ հանձին Գաբու-
զաշյանի և Հ. Գուրգենի, որոնք զգրաբարը նորեն կենդանացնելու համար
Կ. Պոլսում հիմնեցին «Ճաշակ ոսկեղեն դպրության» անունով եղուտ մեյրուպ-
յան գրաբար ամսաթերթը, երազելով, որ գոնե գրականության լեզուն գրաբա-
րը լինի:

Ահա այդպիսի միջավայրում հրապարակ իջնելով, Մսերյանը կանգնեց
առաջադիմականների բանակի ավանգարդում, իր գործունեությունը ծավա-
լեց նախ թարգմանչական բնագավառում: 1872 թվականին, կղերական ոեակ-
ցիոներ Աշրգյանի՝ դեմ բանավեճ մղելուն զուգահեռաբար, նա աշխատհարար
թարգմանեց Ա. Դյումայի «Բուրիս» վեպը և հայտնի դարձավ իրեն ճճաշակա-
վոր թարգմանիչ:

Արևմտահայ այն ժամանակվա իրականության մեջ թարգմանել է նոր
միտք որոնող երիտասարդության անաստված հռչակված աշխարհաբարով
եվրոպական, մանավանդ ֆրանսիական գրողներին մատուցելը նշանակում էր
«մարտնչել լուսո համար՝ խավարին դեմ, իրավանց համար՝ բռնաօտրության
դեմ, քաղաքակրթության համար բարբարիկ հետադիմության դեմ»:

70-ական թվականներին Մսերյանը թարգմանեց Ամիտե Աշարին, Ժորժ
Սանդին, Ալեքսանդր Դյումային, Ֆեոդին, Բուկաշչովին, Լր Ֆեվրին և այլ գրող-

¹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն. մաս 2, 1951, էջ 496.

² Նույն տեղում, էջ 505.

ների: Մեր ներկա հոգվածի խնդիրներից դուրս է Մսերյան-թարգմանչի գործունեության համակողմանի գնահատությունը, բայց նշենք, որ հենց Դիան Թակաչչոյի «Դեկամերոնի» ազատ թարգմանությունն ու երկու հատորիկներով հրատարակելը (1878 թ.) ինքնին աչքի ընկնող երևույթ էր հայ թարգմանական գրականության մեջ: Վերածնության գրականության այդ հոյակապ կոթողում արտացոլվել է կուսակրոնության սուր քննադատությունն ու ժխտումը, նրա էջերում տեղ են գտել պապական Հռոմի, կաթոլիկական եկեղեցու, հոգևորականության և առհասարակ հոգևոր ու աշխարհիկ ֆեոդալիզմի ընդգծված մերկացումները:

1878 թվականին Գ. Մսերյանը հիմնեց իր տպարանը, իսկ 1880-ին լույս ընծայեց իր պարբերականը՝ «Մետեորան»: Բայց թե մեկը և թե մյուսը հրկառ կյանք չունեցան: Դրա, թերևս, միակ և գլխավոր պատճառը Համիդ նրկուրդ սուլթանի՝ «թուրքական նիկոլայ Երկրորդի»¹ տիրապետության տարիներին ստեղծած դաժան ու վայրենի ռեժիմն էր, որին զոհ գնաց Մսերյանի թե՛ տպարանը և թե՛ հանդեսը: Չնայած իր կարճատև գոյությանը, «Մետեորան» որոշակի տեղ ունի հայ հասարակական մտքի զարգացման պատմության մեջ, իսկ Մսերյանի հրատարակած գրքերից մի քանիսը («Հովհաննա բարուհի», «Նոր այրբենարան ֆրանսերենի», «Ընթերցարան», «Համառոտ դիցարանություն» և այլն) արևմտահայ մտավորական կյանքի ուսումնասիրության համար արժեքավոր նյութ են տալիս:

Մեզ քիչ բան է հայտնի Գ. Մսերյանի կյանքի վերջին տասնասյուլի (1883—1893 թթ.) դրական-հրապարակախոսական գործունեության մասին: Առանձին աղբյուրների հաղորդած տեղեկություններից պարզվում է, որ նա այդ տասնամյակում կտրվում է հրապարակախոսական, դրական կյանքից, մամուլից, մատնվում է լուծյան: Բայց «ամլության» այդ տարիներին, այսուամենայնիվ, նա մասնակցում է հայ հասարակական կյանքին, ընտրվում է գաղափարական ժողովի ազգային երեսփոխան, Հայուհայի երկսեռ ուսումնարանի հոգաբարձու: Հիշատակություններ կան նաև, որ նա այդ տարիներին մերթ ճանապարհորդում էր Եվրոպայում ու կապեր հաստատում անվանի գիտնականների (այդ թվում նաև Հյուբշմանի) հետ, մերթ իրեն նվիրում հայկական գաղթի պաշտպանությանը, մերթ հասարակական օգտակար աշխատանք ծավալում:

Այդ ամենից բացի Գրիգոր Մսերյանը հայտնի է իրրև լուրջ պատմությանը, խորաթափանց մտքի և սուր իմացականության տերը² անձնավորություն, որը «առհասարակ կարգ մ'ուսումնականներու վրա ներգործություն ունի»: Համագործակցելով Գալուստ Կոստանդյանի հետ, ժողաչին խիզախ քայլեր կատարելով նա գրապաշտ դպրոց մը հաստատելու հայոց մեջ³, նա առիթներ էր որոնում ժողովրդաված կարծյաց և սովորությանց դեմ ստեպ խիզախուի կ'սլ էլ «նոր գաղափարներու և հորիզոններու մեջ իր գրական ոգուն ճարտ' գտնելու» համար: «Առաջադիմության ջերմ կուսակիցը», սակայն, «ձախող պարագուներին» հետևանքով չկարողացավ իրեն լիովին դրսևորել⁴:

¹ Վ. Ի. Լենին. Երկեր. հ. 15, էջ 216.

² «Արձագանք», 1893. № 103 և «Արևելյան մամուլ», 1893. էջ 384.

³ «Հայ գրականություն», 1911, № 5, էջ 36.

⁴ «Արևելյան մամուլ», 1893. էջ 384.

Ուշագրավ է Գրիգոր Մսերյանի գերը արևմտահայ իրականության մեջ «դրական գիտությունների» պրոպագանդման գործում: Զինակցելով բնագետ-փիլիսոփա Գալուստ Կոստանդյանին, Մսերյանը ձգտում էր արևմտահայ սրի-սուսարդության մեջ սեր արթնացնել դեպի ճշգրիտ գիտությունները, ընդգծում էր դրանց նշանակությունը մարդկության ընդհանուր պրոգրեսի համար: Այս բնագավառում նա հետևում էր ֆրանսիական հայտնի գիտնականներին ու մտածողներին, թարգմանում ու հրատարակում էր նրանց որոշ էրեզիա-թյունները: Կղերա-ֆեոդալական գաղափարախոսության դեմ մղված պայքարում դա մի լուրջ ավանդ էր: Հայ երիտասարդությանը դեպի բնական գիտություններ մղելը նշանակում էր նրանց կտրել կրոնական գրքերից, եկեղեցուց ու վանքերից: «Դրապաշտ դպրոց մը հաստատելու» ձգտումները թոշահայ այն ժամանակվա իրականության մեջ հայտնի չափով պրոգրեսիվ մի բայ էր, որն ուղղված էր հին, սխուլաստիկ մտածողության ու սնոտիապաշտության դեմ, կրոնի կեղծ ու հակագիտական ուսմունքներով ժողովրդական մասսաներին կաշկանդող հայ կղերի դեմ: Այդ պայքարում, սակայն, Մսերյանը մնաց լուսավորական գործչի շրջանակներում:

Լինելով ֆրանսիական գիտնական էմ. Լիթրի հետևորդը, Մսերյանը ժամանակի մեծագույն խնդիրն էր համարում բարեփոխել մարդկանց մոտույր վիճակը: Դրան հնարավոր չէ հասնել որևէ այլ ուղիով, քայքայելով գիտության անընդհատ աշխատությունը, կրթությունը» (Լիթրե): Լուսավորական այս ծրագրի կենսագործումը կխարխլեր կղերա-պահպանողական գաղափարախոսության հիմքերը, նոր մտածելակերպ կդարգացներ, քննադատական ոգի կարթնացներ այն ամենի նկատմամբ, ինչ հին է, ինչ հիմնված է խավարի ու ոգիտության, կույր հավատի ու սնոտիապաշտության վրա: Ահա ինչու Մսերյանի ու նրա մյուս կողմնակիցների դեմ ծառացավ հայ ռեակցիան: Հայ ռեակցիան՝ թուրքական դաժան ռեժիմի հետ ղինակցած, ծանր կացության մեջ դրվելով, 19-րդ գործիչներին: Գրիգոր Մսերյանի երիտասարդ տաղանդը ևս ժամանակի ռեակցիայի գոհը դարձավ: Մի քանի տարի առաջ այդ նույն ռեակցիայի՝ զոհն էր դարձել նաև զմյուռնահայ երկու խոշոր մտածողների՝ Կոստանդյանը ու Զինկիրյանի փայլուն տաղանդը:

Գրիգոր Մսերյանը մահացավ 1893 թվականի օգոստոսի 15-ին, Զմյուռնիայում բռնկված խուլերայից: Նրա մահը մեծ վշտով են արձանագրում: Ժամանակի նշանավոր գործիչները: Ստ. Ոսկանը բարձր գնահատելով Գ. Մսերյանի գործունեությունը ընդգծում է, որ նա «ունեւ միտք մը առաջադիմական և բարենորոգչական ամեն գաղափարի ընդունակ, իր բնական հատկությունները կատարելագործված էին դաստիարակությամբ և այն հետաքրքիր ոգով, որ թույլ կուտար ընտրյալ մտքերուն, որպեսզի անոնք վեր բարձրանան հասարակաց մակարդակեն և որպեսզի նույնիսկ անոնք ուղղվին իբրև ազաթող թռչուններ» դեպի լույսի սահմանները՝ ճամբան կորսվելու իսկ վտանգով»:

Զափազանց արժեքավոր է Արփիար Արփիարյանի մահախոսականը: Այն, Մսերյան գործչին ու անձնավորությանը տված բարձր գնահատականից բացի, պարունակում է դեմոկրատ գրողի ուշագրավ վկայությունն իր և Մսերյանի միջև եղած կապի և գաղափարական հարազատության մասին: Այդ մահախոսականում Արփիարյանը գրում է.

¹ Մեջբերումը կատարվում է ըստ Վ. Զարգարյանի «Հիշատակարանի», 1910, էջ 154.

«Գրական փոխադարձ համակրանքով մը կապված էինք Մսերյանի հետ: Մենտեռայի հրատարակիչը, «Աղքատ երիտասարդի մը վեպ»-ին թարգմանիչը կսիրեի իբր գրագետ մը, որ իմաստասիրական գաղափարներով կաշխատի և համեստ և ազնիվ է: Եվ բարեկամական նամակ մը միայն ընդունած էի իրմեն այն միջոցներուն, երբ Իզմիրի խնդիրներու մեջ որոշ ուղղութեան մը կհետեւի: Այդ նամակով Մսերյան քաջայերիչ մը կրլար ինծի, չվհատելու համար Իզմիրի մեր հակառակորդներու հետեւած անազնիվ ընթացքէն: ...Երբ 1889-ին Պոլիս եկավ... Մսերյանի հետ երկարորեն տեսակցելու պատահութիւն ունեցաւ: Զգացումի, գաղափարներու ներդաշնակութիւնը կհաստատե գիրար նոր ճանչցողներու միջև այնպիսի մտերմութիւն մը, որ վաղնջուց անկեղծ բարեկամութեան մը տեղը կրնա բռնել»¹:

Մսերյանի մահվան առթիվ կենսագրական տվյալներով ու գրական-հասարակական գործունեության ամփոփումով նյութեր են տպագրվել նաև արևելահայաստանում («Արձագանք», 1893, № 103, «Տարազ», 1894, № 4 և այլն):

Այսպիսին է արևելահայ ճանաչված գործիչ՝ Գրիգոր Մսերյանի դիմատվերը:

ՄԵՍԵՐՈՊ ԼՈՒՊԱՐՅԱՆ

Մեսրոպ Նուպարյանը ծնվել է 1842 թ. դեկտեմբերի 3-ին, Զմյուռնիայում, «իբր ժամանակին համար լուսամիտ ու բարակցած մարդու»՝ Հովհ. Նուպարյանի ընտանիքում: Նրա հայրը երկար տարիներ հոգաբարձուի պաշտոն էր վարում: Աղաբեկյանի մասնավոր դպրոցում ուսանելուց հետո, Նուպարյանը տասը տարեկանից աշակերտել է Անդրեաս Փափազյանին, ապա պարապել ինքնակրթությամբ: Դեռ տակավին պատանի հասակում Նուպարյանը տարվել է գրական-հրատարակչական գործունեությամբ: Մեսրոպյան վարժարանում սովորելու տարիներին մի խումբ աշակերտների հետ միասին հրատարակել է «Երկասեր» փոքրածափալ («մանրադիտական») պարբերականը, իսկ ուսումնառութիւնն ավարտելուց անմիջապէս հետո երկու համախոհների հետ ձեռնարկել է «Մեծադիր լուրջ» հանդեսի՝ «Ուսումնասերի» հրատարակութիւնը: Առողջական վիճակը, սակայն, խանգարել է Նուպարյանին «Ուսումնասերի» խմբագիր-հրատարակիչներից մեկը լինելու²:

Նուպարյանի մանկության ընկերներից ու բարեկամներից մեկն էր Գալուստ Կոստանդյանը, որի հետ նա կապված էր «ամենասերտ մտերմութեան մը կապերով»:

Նուպարյանի ու Կոստանդյանի գաղափարական մտերմութիւնը շարունակվել է նաև հետագայում: Իր «Մեթոդին վրա» հանրահայտ գրքի առանձին հատվածներ Կոստանդյանը դեռ սևագիր վիճակում կարդացել է Նուպարյանին: Իր հերթին վերջինս ևս խորհրդակցում էր «նյութապաշտ փիլիսոփայութեան սկզբունքներու և կարծիքներու խանդավառ հարած և անոնց ծավալումն դրական օգուտ ու լուսավորութեան ակնկալող գիտունի» հետ:

Նուպարյանը հրապարակ է իջել 60-ական թվականների սկզբին: Մի շարք թերթներով «Արշալույս Արարատյանում» հանդես գալուց հետո, 1862 թվա-

¹ «Հայրենիք», 1893, № 544.

² Տե՛ս Մ. Նուպարյանի մեմուարները, «Արևելյան մամուլ», 1894, էջ 702 և հետո:

կանին նա «գորարար թարգմանած է» Շատորիանի վաղ շրջանի մի երկը, որը հրատարակվել է Տետեյան տպարանում, Այդ ժամանակաշրջանում էլ Նուպարյանը միացել է արևմտահայ լուսավորիչների վերոհիշյալ խմբակին:

Մ. Նուպարյանի կատարած աշխարհաբար թարգմանությունների ցանկը սկսվում է Ռասինի «Դատասերքով» (1863 թ.): Ֆրանսիական դատական իշխանությունների կամայականություններն ու կաշառվածությունը մերկացնող այդ կոմեդիան թրքական իրականության մեջ կատարում է այնօրյա իշխանությունների, մասնավորապես դատարանների ծախու էությունը մերկացնող սուր զենքի դեր: Այնուհետև նա թարգմանում է Լաֆոնտենի, Վիկտոր Հյուգոյի, Մուլինոյի, Բուալոյի, Գյոթեի, Վոլտերի, Շեքսպիրի, Ռենանի, Ֆլորիանիի, Սենեկայոյի, Նանսենի և ուրիշների ստեղծագործությունները: Նրա թարգմանությունների շրջանակը, որ հետագայում ավելի է ընդարձակվել, ինչպես տեսնում ենք, բավականաչափ լայն է ու բազմազան: Այն ընդգրկվում է ոչ միայն տարբեր խառնվածքների ստեղծագործողների, այլև ամենատարբեր ժանրերի գործեր: Նուպարյանը թարգմանել է բանաստեղծություններ, առակներ, վեպեր, պիեսներ, մեծ ու փոքր կտավի երկեր:

Այս կամ այն երկի թարգմանությանը ձեռնամուխ լինելիս Նուպարյանն իր առջև նպատակ չէր դնում կրոնական, բանաստեղծական, ուսումնական և այլ նյութերից ձանձրացած հայ ընթերցողներին միայն «ինքն իրեն կարդացվող» հետաքրքրաշարժ վեպեր տալ, կամ՝ թարգմանչությամբ սոսկ զարկ տալ աշխարհաբարին, նպաստել նրա հաղթանակին: Նուպարյանն իր առջև դնում էր ավելի լայն և չափազանց կարևոր մի այլ խնդիր ևս: Նպատակ դնելով գրականության միջոցով նպաստել հայության լայն շրջանների դաստիարակությանը, նրանց աշխարհայացքի ձևավորմանը, նա թարգմանությունները կատարում էր հատուկ ընտրությամբ: Յուրաքանչյուր առանձին դեպքում, անշուշտ, Նուպարյանը որոշակի նպատակներ էր հետապնդում, թարգմանվող հեղինակների ու նրանց հերոսների միջոցով ասում այն, ինչ հայ մտավորականները չէին կարող ասել սուլթանական Թուրքիայի պայմաններում:

Թե ինչ տանջանքների գնով էր Նուպարյանին հաջողվում հրատարակել իր թարգմանությունները, ինչ վայրենություններ ու կամայականություններ էին կատարում թրքական գրաքննիչները, երևում է այդ մասին պատմող Նուպարյանի «Վերհիշումներից», որը համիդյան գրաքննությունը մերկացնող մի հիանալի փաստաթուղթ է՝ ցավոք սրտի, մինչև հիմա ուշադրության չարժանացած: Այդ «Վերհիշումներում» սուլթանական գրաքննության կամայականություններից ու տգիտություններից ավառված ու խորովված թարգմանիչը պատմում է այն մասին, թե թուրքական դաժան գրաքննության կողմից ինչպիսի բարբարոսական վերաբերմունքի են արժանացել իր կատարած թարգմանությունները և առձեռն ֆրանս-հայերեն բառարանը:

Թարգմանելով հայտնի առակագիր Լաֆոնթենի 20—25 ընտիր ստեղծագործությունները, Նուպարյանը տպագրելու իրավունք ստանալու համար ուղարկում է «բռնակալ Համիդը ներկայացնող բռնակալ և հիմար գրաքննական Ատյանը»: Տեղի ունեցավ այն, ինչ թարգմանչի «երևակայութենեն չէր անցնիր բնավ». առակների հավաքածուն ամբողջապես արգելվեց, «թեպետ բնագիր Լաֆոնթենը ու անոր այլաբարբառ բազմաթիվ թարգմանությունները կվխտա-

յին գրավաճառներու ցուցափեղկին մեջ»։ Նուպարյանը փորձեց կոմպրոմիսի գալ, խնդրեց հանել «վնասակար» առականները և թույլատրել «անմեղներին» տալ գրութիւնը։ — «Ամեն առակ մեյմեկ ականարկութիւն է, հետեւաբար ոչ մեկուն հրատարակութիւնը կրնանք արտոնել», — այս է լինում «ստորուկ և խայտառակ» գրաքննութեան կտրուկ պատասխանը¹։

Այդպէս էլ Նուպարյանին շահողվեց շրջանցել համիդյան գրաքննութիւնը։ Նա իր հայացքն ուղղեց դեպի Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը, որ Նուպարյանի կարծիքով «ճշմարիտ բարիք մը եղած է ուսահայ համեմատաբար բաղդավոր գրագետ դասուն»։ Թիֆլիսում «հայ կաֆոնթները ընտիր թղթի ու փառավոր տպագրութեամբ ի լույս ընծայվեցաւ»։ Բայց դրանով չսույառվեցին հալածանքները։ Ռուսաստանում տպագրված «կես-հալածական երկը» թուրքիա ներմուծվեց անլեզալ ճանապարհով և «զաղտագողի ծախվեցաւ գրավաճառներէ»²։

Նուպարյանի վկայակոչված հուշերը վերապատմում են նաև այն տառապանքները, որ կրել է Մոլիերը թուրքական գրաքննութեան «բղկտիչ ճիրաններէն»։ Թարգմանված 24 կատակերգութիւններից միայն 12-ի տպագրութեան թույլտվութիւնը ստացվեց, այն էլ «հաշմված ու պղծված»։

Նուպարյան-թարգմանչի դիմաստվերն ուրվագծելիս չի կարելի չնշել նաև նրա մի կարևոր յուրահատկութիւնը։ Նա իր համարյա բոլոր թարգմանութիւններին կցում էր առանձին նախաբան, ուր հաճախ խորը և բանիմացութեամբ վեր էր լուծում տվյալ երկը, իր ակտիվ վերաբերմունքն արտահայտում։ Այս տեսակետից հատկապէս արժեքավոր է «Ֆ սուստի» իր թարգմանութեանը կցած նրա նախաբանը։ Լինելով Գյոթեի այդ հանճարեղ երկի առաջին թարգմանիչը, Նուպարյանն էլ, եթե չենք սխալվում, եղավ նրա առաջին հայ գնահատողը։ Մի կարևոր դետալ ևս, թարգմանելով Վ. Հյուգոյի «Նոտր Դամ Բարիդի» («Փարիզի աստվածամոր տաճարը») վեպը Նուպարյանը նամակագրական կապ է հաստատել հեղինակի հետ և արժանացել նրա բարեմաղթանքին։

Հայ հասարակական մտքի պատմութեան մեջ Նուպարյանը որպէս թարգմանիչ անպայման իր տեղն ունի։ Այդ տեղը որոշելու համար ամուր հիմքեր են տալիս ոչ միայն 60—80-ական թվականներին ծավալած նրա թարգմանչական գործունեութիւնը, այլև հետագա տասնամյակների ընթացքում նրա կատարած թարգմանութիւնները։ Ուշագրաւ է, որ այդ թարգմանութիւնների շարքում հանդիպում ենք ֆրանսիական ուղղութիւնի պոեզիայի հայտնի ներկայացուցիչների բանաստեղծութիւններին, Վ. Հյուգոյի բազմաթիւ ստեղծագործութիւններին, ինչպէս նաև ֆրանսիական ուղղութիւնի հրգի՝ «Մարսելիեզի» գողտրիկ թարգմանութեանը³։

Նուպարյանը մի քանի հատորների հասնող թարգմանութիւններից քացի

¹ Տե՛ս «Շանթ» 1913 թ., № 37, էջ 199—200։

² Նույն տեղում։ Հարկ ենք համարում նշել, որ Նուպարյանը ուրիշ անգամ էլ է գիմել Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութեանը։ Սենեկոյի «Համառոտ պատմութիւն քաղաքակրթութեան» գրքի Նուպարյանի թարգմանութիւնը տպագրվել է Թիֆլիսում։ Հետագա տարիներին՝ 1909 թվականին Նուպարյանը նամակագրութիւն է ունեցել ընկերութեան հետ։ Նա առաջարկում էր հրատարակել Գյոթեից և Բուսոյից կատարած իր թարգմանութիւնները։ Այդ մասին Նուպարյանի գրած նամակները տե՛ս Հայկական ՍՍԻ ՊԿՊԱ, ֆ. 30, գ. 14, թթ. 172—173, 283—284, 426—427։

³ «Մարսելիեզ» Մ. Նուպարյանի թարգմանութեամբ տպագրված է Ռ. Որբերյանի «Ուսուսի» գրքում, 1920, էջ 216—218։

ունի նաև արժեքավոր ինքնուրույն աշխատասիրություններ: Այստեղ ամենից առաջ պետք է նշել նրա «Բառարան ֆրանսերենի հայ-աշխարհիկը», որը 12 տարիների վաստակ լինելով, մի կապիտալ աշխատանք է՝ շուրջ 40.000 բառ-րենգրկումով: Բառարան ստեղծելու նրա սկզբունքները, նրա կատարած տրք-նաչան աշխատանքը, նրա պայքարը աշխարհիկ բառարանի հակառակորդների դեմ արժանի են հատուկ ուսումնասիրության:

Նուպարյանն իր բառարանը ստեղծել է Գալուստ Կոստանդյանի, Մատթեոս Մամուրյանի, Գրիգոր Մսերյանի օգնությամբ ու ջերմ պաշտպանությամբ, ինչ-պես ինքն է նշում երախտագիտության խորը զգացումով¹: Իր բառարանը կազմելիս Նուպարյանը ղեկավարվում էր «գրարարի երկար ու խժալուր բառերի» մերժման և «գավառական կամ ժողովրդական բառի մ'օգնությամբ» հայերենում չեղած բառերն ու արտահայտությունները ստեղծելու սկզբունքով: Նա ձգտել է բառարանին հանրագիտական բնույթ տալ: Հսկայական աշխատանք է կատարել Նուպարյանը, մինչև որ կարողացել է հաղթահարել բառարանի պատրաստման հետ կապված բոլոր դժվարությունները²: Նուպարյանը պարտավորված էր մի քանի հազար նոր բառեր, տերմիններ ու արտահայտություններ հորինել: «Ֆրանսերենի հայ-աշխարհիկ բառարանը», — գրում է ինքը Նուպարյանը 1893 թ., — «գերագույն ճգանց արդյունք՝ աննկուն կամքի մ'ուժով միայն կրցավ գլուխ ելնել»³:

Ֆրանս-հայերեն աշխարհիկ բառարանի հրատարակման փաստը (1892 թվական), երբ Արևմտյան Հայաստանում դեռ շարունակվում էր գրապայքարը, ինքնըստինքյան, կուլտուրական նշանակություն ունեցող մի նշանավոր երևույթ էր: Նրա երևան գալը, բնականաբար, մի նոր հարված էր գրաբարամուլների վերջին մոհիկաններին: Նուպարյանն իր բառարանով առաջին անգամ ապացուցեց, որ դեռևս «իր զարգացման շրջանի մեջ» գտնվող աշխարհաբարն այնքան ճկուն, այնքան հղկված ու կատարյալ է, որ նրանով կարելի է բացատրել «գրական և գիտական ըստ ամենայնի մշակյալ» ֆրանսերեն լեզվի հազարավոր բառերը, «յու հայոց լեզուն կարող է ֆրանսերենի հետ ադեմ առ դեմ ճակտել»⁴:

Գրաբարայինները, առանձնապես Նորայր Բյուզանդացին, որի լեզուն Հ. Աճառյանի դիպուկ բնորոշմամբ, «աշխարհաբար լինելուց ավելի գրաբար է»⁵, կատաղի պայքար ծավալեցին Նուպարյանի և նրա բառարանի դեմ: Բայց այդ պայքարում հաղթող դուրս եկավ Նուպարյանի բառարանը: Ժամանակակիցները (Ալիշան, Լուսինյան, Ս. Ոսկան, Ն. Տեմիրճիպաշյան և այլն) բարձր գնահատական տվեցին Նուպարյանի բառարանին⁶, Պահպանողական հոսանքը մի պարտություն ևս կրեց:

Ոչ միայն «Ֆրանսերենի հայ-աշխարհիկ» բառարանով, այլև մեծաքանակ թարգմանություններով նոր գրական լեզվի զարգացման գործում Նուպարյանի կատարած դերը բնավ աննկատ չմնաց: Նրան մի խումբ կենսագիրներ դասել են

¹ Տե՛ս «Արևելյան մամուլ», 1902, էջ 404 և «Հայ գրականություն» 1911, № 5, էջ 36:

² Այդ մասին որոշ պատկերացում է տալիս Մ. Նուպարյանի հուշերի այն հատվածը, որ «Մեր ֆրանսերենի հայ-աշխարհիկ բառարանի ողիսականը» բնորոշ վերնագրով հրատարակվել է «Թեոդիկի Ամենուն տարեցույցի» 1924 թվականի համարում (էջ 78—88):

³ Տե՛ս «Արևելյան մամուլ», 1893, էջ 420:

⁴ Մ. Նուպարյան, Բառարան ֆրանսերենի հայ-աշխարհիկ. Կ. Պոլիս, 1892, էջ Ը:

⁵ Հ. ր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, 1951, էջ 527:

⁶ Մ. Նուպարյանի բառարանի գրախոսությունների ցանկը տե՛ս Ա. Ղազիկյան, Հայ-կական նոր մատենագիտություն..., պր. 2, էջ 299—300:

այն նախակարապետների շարքում, որոնք իրենց կյանքը նվիրեցին աշխարհաբար լեզվի մշակմանը և որոնք «վաղուց ըմբռնեցին անոր կարևորությունը, իբրև ժողովրդական բարքառ, երբ ուրիշներ համառորեն կառչեցան գրաբառին...»¹։ Աշխարհաբարի զարգացման գործում նուպարյանի կատարած դերն է մասնաւոր նշում նաև Հր. Ասատուրը. «Կարելի չէ ուրանալ,— գրում է նա,— որ նուպարյան իր երկարատև գրական գործունեությամբ արդի աշխարհաբարին գնահատելի ծառայություն մատուցած է»²։

Իր կյանքի սկզբնական շրջանում նուպարյանը գրական փորձեր է կատարել նա հանդես է եկել մի քանի բանաստեղծություններով, ինչպես նաև տպագրել է «Ընտանեկան եղերք մը (իրական պատմություն)» վիպակը³, որը շուտով է կենցաղաբարոյական խնդիրներ։ Սակայն պետք է նշել, որ նուպարյանի ինքնուրույն գրական ստեղծագործությունները հաջողություն չեն ունեցել։ Նրա բեղմնավոր գրչին պատկանող ինքնուրույն նյութերի շարքում բացառություն են կազմում հուշագրությունները։ Դրանք աչքի են ընկնում իրենց վարպետ շարադրանքով, կարդացվում են հետաքրքրությամբ և ճանաչողական բարձր արժեք ունեն։ Ժուռնալային շուրջ 130 էջ ծավալով «Իմ մանկակուն հիշատակներս»⁴ խորագրով այդ հուշերը, որ գրվել են 'Բ. Մահարայի առաջարկով, գլխավորապես նվիրված են հին դպրոցին ու մանկավարժներին, որոնց նուպարյանն ուրվագծում է նուրբ դիտողականությամբ ու հմտությամբ։ Սովետահայ ընթերցողն այդ հուշերում օգտակար շատ բան կգտնի։ Ինչ վերաբերում է նուպարյանի «Վերհիշումներին»⁵ և արևմտահայ առանձին գործիչների (Գ. Կոստանդյան, Մ. Մամուրյան, Գ. Մսերյան և այլն) նվիրված հոդվածներին⁶, ապա դրանք արժեքավոր սկզբնաղբյուրների նշանակություն ունեն և չափազանց կարևոր նյութեր են պարունակում։

Իր երկարատև կյանքի ընթացքում նուպարյանն աշխատակցել է հայ պարբերական մամուլի բազմաթիվ օրգաններին։ Դեռ տակավին «տղա հասակում» կապվելով մամուլի հետ, նա մինչև խորր ծերություն հանդես էր գալիս թերթների ու ամսագրերի էջերում։ Նրա հանրածանոթ ստորագրությամբ բազմաթիվ նյութեր կան «Արևելյան մամուլում», «Արևելքում», «Բյուզանդիոնում», «Մադիկում», «Հայաստանի կոչնակում», «Նոր լուրերում», «Հայ գրականությանում», «Շանթում», «Հայ սիրտ» շաբաթաթերթում և այլ պարբերականներում։ Այդ նյութերը կարող են հատուկ ուսումնասիրության։

1924 թվականին Թեոդիկի «Ամենուն տարեցույց»-ում հրապարակված հոդվածում նուպարյանը պատմում է նաև վերջին շրջանի իր գրական գործունեու-

¹ Այս և հետագա մեջբերումները կատարվում են ՀՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանում (արևմտահայ և սփյուռքահայ գրողների ֆոնդ) վերջերս ստացված մի տպագիր տետրակից, որը կրում է «Ենթանախնամալ Յորելան Մեսրոպ նուպարեանի գրական գործունեութեան, 1859—1929» խորագիրը։ Այդ և նուպարյանին նվիրված մի քանի այլ նյութեր հնագույն մանկավարժ, հայրենագարժ Թ. Բոյաջյանի միջոցով թանգարանին է նվիրել ֆրանսահայ նախկին տպարանատեր Խոսրով Մաթիկյանը։ Օգտագործելով առիթը, մեր շնորհակալությունն ենք հայտնում նրան։

² Գրականության և արվեստի թանգարան, Թ. Աղատյանի ֆոնդ, բաժին 1, № 17, Հր. Ասատուր [Հայ մատենագրությունը և հայ մատենագիրները], էջ 328—329 և 330։

³ Տե՛ս «Արևելյան մամուլ», 1897, էջ 606 և հետո։

⁴ «Արևելյան մամուլ», 1893—1894 թթ.։

⁵ «Շանթ», 1913, № 37—40, էջ 199 և հետո։

⁶ Տե՛ս «Արևելյան մամուլ», 1902, № 9, էջ 401—411, 1904 № 1, էջ 12—16, «Հայ գրականություն», 1911, № 5, էջ 36—38։

թյան մասին¹։ Պարզվում է, որ նա ութը տարի շարունակ աշխատել և ավարտի է հասցրել «Հանրագիտական բառարան» երկասիրությունը, ապա կատարել բաղմամբիվ նոր թարգմանություններ, որոնց մի զգալի մասը կորստի է մատնվել։ Որքան մեզ հայտնի է, հիշյալ հանրագիտարանը ևս չի պահպանվել։

1922 թվականին, Զմյուռնիայի հայտնի եղեռներից հազիվ իր կյանքի ազատելով, Նուպարյանը ապաստան գտավ Մարսելում, ուր «հայ դպրության բաղմամբաստակ մշակը» «երիտասարդի մը պես տակավին» շարունակեց իր բեղուն գործունեությունը։ Շուրջ ինը տասնյակ տարիների ծանրության տակ կքսած, համեստ, բարի, միշտ «հայ մտքին ու հայ գրչին» ծառայող, «հստակամիտ դադափարներով» տոգորված «վաստակավոր նահապետը» «չոր հացին մօջ էր գտնում իր վերջին հագուրդը»։ Նա «ծայրը ծայրին ապրող մտավորական մը» էր ու «միշտ փնտրած և սիրված դեմք մը եղած է իդմիրի... ժողովրդական խոնարհ խավերու մեջ...»։ 1929 թվականին նրա մասին գրվում է, որ «կիսափաքի Երևանի կառավարության թողուլ տասնմեկ ձեռագիր երկասիրություններ, երկու մատենադարաններ, շորս սնտուկ տպագիր գործեր...»։

Ֆրանսիայում բնակվող հայ մտավորականները 1929 թվականին որոշում են տոնել Մեսրոպ Նուպարյանի գրական գործունեության 70-ամյակը։ Այդ մասին նյութեր են հրապարակվում մամուլում։ Կազմվում է 40 հոգուց բաղկացած հորելյանական հանձնախումբ։ Սարսելի տպարաններից մեկում տպագրվում է «Հարգելի հայրենակիցներին» ուղղված ընդարձակ կոչ և Մ. Նուպարյանի կենսագրականը՝ երկու լուսանկարով։ Նախատեսվում էր հորելյանը նշել Փարիզի կենտրոնական սալոններից մեկում։

Սակայն կյանքի վերջում էլ Նուպարյանին վիճակված չէր վայելելու իրեն մատուցվող հարգանքը։ 1929 թվականի դեկտեմբերի 4-ին, ութսունութ տարեկան հասակում Նուպարյանը մահացավ։ Նրա հորելյանի առթիվ հավաքվող միջոցներն ու նվիրատվությունները նախատեսվեցին նրա գերեզմանի վրա մահարձան կանգնեցնելու համար։

Գրիգոր Մսերյանի և Մեսրոպ Նուպարյանի անունները կապված են հայ պարբերական մամուլի հետ։ 1880—1882 թվականին նրանք հրատարակել են «Մետեորա» գիտական, ազգային և գրական պարբերականը։ Եւ 1871 թվականից հետո մինչև 1907 թվականը՝ շուրջ 36 տարվա ընթացքում Զմյուռնիայում լույս տեսած երկու նոր պարբերականներից մեկն է։ (Մյուսը «Իդմիր» անունով շաբաթաթերթն է, որը ևս կարճ կյանք է ունեցել)։ Բայց «Մետեորան» դրանով չէ միայն հետաքրքրական։ Հրատարակելով սուլթան Համիդ 2-րդի տիրապետության մոայլ ժամանակաշրջանում, ամբողջ Թուրքիայում մոլեգնող դաժան ուժի մի պայմաններում, «Մետեորան», այսուամենայնիվ, դարձավ հայ դեմոկրատական հոսանքին հարող մի յուրօրինակ օրգան և փորձեց նորից ծածանել պայքարի այն դյուշը, որ պարզել էին արևմտահայ դեմոկրատ գործիչները 60-ական թվականներին։ Պարբերականն արտասովոր ծանր պայմաններում փորձեց նրանց ծավալած պայքարը շարունակելու նոր ձևեր ու

¹ Թեոդիկ, Ամենուն տարեցույց, 1924, էջ 87 և «Հայաստանի կոչնակ», 1924, էջ 1580։

եղանակներ գտնել, ձգտեց դառնալ արևմտահայ շրջաններում նոր ձևավորվող, դրական իմաստասիրության վրա հիմնվող գաղափարախոսության արտահայտիչ:

Համառոտակի կանգ առնենք այդ յուրահատուկ պարբերականի վրա «Սե տեորային» նախ և առաջ բնորոշ է այսպես կոչված հայկական հարցի ուրույն արծարծումը մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ ռուս-թուրքական 1877—1878 թվականների պատերազմից հետո ու նրան հաջորդած իրադարձությունների հետևանքով փշրվել էին արևմտահայության փայփայած հույսերը Պարբերականի առաջին երկու համարներում տպագրվել են Մ. Նուպարյանի ծալալուն առաջնորդողները՝ «Արևելյան խնդիր — հայկական խնդիր» ընդհանուր վերնագրով: Հանդեսի «Ազգային-քննական» կայուն բաժնում տպագրված այդ հոդվածում Նուպարյանն իրեն հատուկ խղճատությամբ վեր է լուծում աշուստ և ներքին այն գլխավոր հանդամանքները, որոնք շարունակ սնում են արևելյան խնդիրը և նրա բաղկացուցիչ մասը՝ հայկական հարցը: Դա «Օսմանյան տերության հինավուրց այլասեռ կոճղին մեջ գոյացած ցեց մը է», որը կարողական խոշոր տերությունները ձգտում են լուծել միշտ էլ իրենց «էական ու կենսական շահերը» նկատի ունենալով: Նուպարյանն առաջ է քաշում հայ ժողովրդի արևմտահայ հատվածի «անկապտելի և անժխտելի իրավունքները»՝ ձեռք բերել «ապահովություն և խաղաղ պարգացում»: Նա Սան-Ստեփանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը համարելով «ետին աստիճանի ուրախալի և նշանակալի» մի նվաճում, մատնանշելով «Ս. Բետրպուրկյի դահլիճի» մեր ազգի նկատմամբ բռնած» դիրքը, միաժամանակ քննադատում է ցարական Ռուսաստանի ազգային գաղութային քաղաքականությունը, անբավարար համարում Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը: Ի՞նչ միջոց է հապա առաջարկում Նուպարյանը ազգային ձգտումներն իրագործելու համար, որն է նրա մատնանշած ելքը: Ի տարբերություն պասիվիզմ քարոզող իր ժամանակակիցներից շատերի, Նուպարյանը առաջ է քաշում պայքարը շարունակելու և հույսերը միայն սեփական ուժերի վրա դնելու առողջ գաղափարը: «Ազգային վերածնությունը ազգովին կլինի», — գրում է նա և ապա շարունակում. «Մեր ազգային զարգացումին համար օտարներն սպասելիք բան մը չունինք»: «Հայեր, — կոչ է անում նա, — ժամանակն է որ, սթափինք, ժամանակն է, որ շարժինք, ժամանակն է որ գործինք... միանանք իրարու հետ, ձեռք ձեռքի տանք ազգին նավը առաջնորդելու համար՝ համազգային եղբայրակցություն մը հաստատենք...»: Հատկաէշական է նախ այն, որ Նուպարյանը արևմտահայությանը մատնացույց է անում մեր ժողովրդի արևելահայ հատվածի՝ «Հայաստանի մեր եղբարց» օրինակը, որովհետև «ներա համար չրեղ ապագա մը սահմանված կերևի»:

Ուր և հետևողական է «Մե տեորային» պայքարը կրոնական գաղափարախոսության, կաթոլիկական եկեղեցու, պապականության, ստորին ու բարձր աստիճանի հոգևորականության դեմ: Առանձնապես կորուստ ու անխնա է պարբերականը, երբ մերկացնում է ամբիկյան միսիոներների գործունեությունը, վերլուծում զմ ունահայ գաղութում կատարած նրանց վաթսունամյա «աշխատանքը»: Պարբերականը շարունակաբար հրատարակել է իր ժամանակին մեծ ազդուկ հանած և կաթոլիկ եկեղեցու բանադրանքին ենթարկված «Հովհաննա Բարուհի» սուր երգիծական երկը: Տաղանդավոր հրապարակախոս-քրննադատ էմմանուել Ռիդիսի այդ լիակի տպագրությունը՝ նախ պարբերականում, ապա նաև առանձին գրքով, Գրիգոր Մսերյանին ղնում է կղերա-ուղահ-

պանոգական հոսանքի զաղափարախոսների դեմ մղվող պայքարի առաջամարտիկների շարքում, նրան բնութագրում իրրեւ Հոռմի պապականության, Վատիկանի. կաթոլիկ կղերականության, կաթոլիկ հայ զաղափարախոսների խիզախ մերկացնող խմբագիր-հրատարակիչ: Հրապարակախոսական մեծ կրքով են գրված Հորոն ծածկանունով «Մետեորայում» տպագրված «Ամերիկյան միսիոնարք» ընդհանուր խորագրով այն նյութերը, որոնք քար քարի վրա շեն թողնում միսիոնների ծավալած «գործունեությունից»: Դրանցում ոչ միայն մերկացվում, պատին են սեղմվում ամերիկյան զաղափարարների գործակալ միսիոնները, ոչ միայն ժխտվում է Ս. Գրքի դերն ու նշանակությունը, մերժվում կրոնական բորբոսնած զաղափարախոսությունը, այլև խնդիր է դրվում հայ ժողովրդին տալ Թուրքիդիդեսի, Տակիտոսի պատմությունները, Երիտասարդությանը կրթել սպարտացիների օրենքներով, ուսուցել Մարական և Փյունիկյան պատերազմների պատմությունները, ներշնչել Աթենացիների անկախության ոգին: Ավելին. պարբերականն այդ նյութերում առաջ է քաշում աստվածաշնչի փոխարեն հայերեն «ատրճանակներ և երկրագործական նորահայտ գործիքներ» տալու հարցը:

Այն ժամանակից, երբ «Մետեորան» սուր քննադատություն է ծավալել կաթոլիկական եկեղեցու, Վատիկանի, ամերիկյան միսիոնների դեմ տասնյակ տարիներ են անցել: Փոխվել, կատարելագործվել են զաղափարարներին ծառայող աստծո վեղարավոր ներկայացուցիչների գործունեության ձևերն ու մեթոդները, նոր դիմական է կրում միսիոններությունը, բայց չի փոխվել նրանց էությունը, նպատակը: Ինչպես հնում, այնպես էլ այժմ նրանք խաբում ու կեղեքում են, մոլորեցնում ու զավթում են աֆրիկական, ասիական ու լատինա-ամերիկյան մի շարք ժողովուրդների, զաղափարական զենք են տալիս զաղափարարներին, դարեր շարունակ կրկնում նույն քարոզը՝ հնազանդվիր տիրոջ, բավարարիր նրա պահանջներն առանց տրտունջի:

Հնօրյա կաթոլիկների ու ամերիկյան միսիոնների դեմ ուղղված «Սետեորայի» պայքարը հայտնի չափով չի կորցրել իր թարմությունը:

80-ական թվականներին արեւմտահայ մամուլի վրա կախվել էր համիդյան գրաքննության դամոկլեսյան սուրը: Ստեղծված պայմաններում անհնար էր դարձել ոչ միայն ազատագրական պայքարի կոչ անելը, այլ նույնիսկ հայ թագավորների անվան սոսկ հիշատակությունը: Հայ թերթերն ու ամսագրերը հարկադրված էին իրենց ընթերցողների հետ խոսել եգեպոսյան լեզվով և ամեն կերպ փորձում էին տողամեջ ասել այն ինչ արգելում էր սուլթանական գրաքննությունը: Ահա այդ պայմաններում հրատարակվող «Մետեորայի» խմբագիրը խիզախ մի քայլ արեց: Մանրյանը «Նոր Հունաստան» բաժնում հրատարակեց «Ձոթոս Ցավելաս» անմեղ վերնագրով պատմական մի ակնարկ, նրան կցելով հատուկ նախարան: Դա թուրքական լծի դեմ հունական ժողովրդի մի հատվածի, Բայրոնի ջերմ համակրանքին ու աջակցությանն արժանացած քաջարի սուլեյմանի հերոսական պայքարի մասին պատմող մի վավերաթուղթ է, որի տպագրության նշանակությունը այնօրյա արեւմտահայ իրականության համար բավականաչափ նշանակալից է: Հերոսական, անձնագոհ պայքարով, զենքի ուժով ու համատեղ ջանքերով կարելի է թոթափել օտար լուծը, թող հակառակորդի ուժերը հարյուրապատիկ ավելի լինեն, թող նրանք գինվեն մինչև ատամները, թող նրանց օգնի ալլահը, միևնույն է, իր հայրենիքի, իր անկա-

խության, իր ազատության համար մարտնչող ժողովուրդը վերջ ի վերջո կհասնի հաղթանակի, դա է ասում սուլեյմանյանը, դա է ասում Հունաստանի օրինակը:

Բայց այդ ակնարկի հրատարակությունը ազգային-աղատագրական պայքարի բորբոքման «Մետեորայի» պլանի մի մասն էր միայն: Այն ավարտվում է «Պիտի շարունակվի» արտահայտությամբ: Բայց «Մետեորային» վիճակված չէր արունակելու սկսված ակնարկաշարի տպագրությունը:

«Մետեորայի» ճակատին, ինչպես տեսանք, «ազգային», գրական տիտղոսից զատ դրոշմված է նաև «գիտական» տիտղոսը: Եվ իբրև գիտական հրատարակություն այն եզակի տեղ ունի արևմտահայ պարբերական մամուլի պատմության մեջ: Գիտական նյութերը նրանում բավականաչափ մեծ տեղ են բռնում: Դրանք պատմում են բնական գիտությունների նորագույն նվաճումների մասին, շարադրում են քիմիայի ու ֆիզիկայի, մաթեմատիկայի ու աստղաբանության ուսումնասիրության մեթոդական ու տեսական սկզբունքները, հայ ընթերցողներին ծանոթացնում են արևմտյան խոշոր բնագետների (Լապլաս, Կուլոմբ, Լամարկ, Դարվին և այլն) հայտնագործություններին, գիտական տվյալների վրա հենվելով բացատրում են երկրի ու տիեզերքի ծագման, կյանքի առաջացման ու զարգացման հիմունքները: Այդ նյութերի հրատարակումը 80-ական թվականների սկզբի արևմտահայ իրականության համար եզակի երևույթ էր և խոշոր նշանակություն ուներ կրոնի հակագիտական ուսմունքը ժխտելու, կղեւա-պահպանողական հոսանքի գաղափարախոսության դեմ ճակատամարտելու համար:

Գ. Մսերյանի խմբագրությամբ ու Մ. Նուպարյանի աշխատակցությամբ հրատարակված պարբերականի դերն ու նշանակությունը հիշատակված նյութերի տպագրությամբ չի ավարտվում: Բայց դրանք էլ բավական են «Մետեորայի» տեղն ու դերը բնորոշելու համար:

Այն ինչ արեցին արևմտահայ այդ երկու մտավորականներն իրենց պարբերականում, միայն մի մասն է այն ծրագրի, որ նախատեսում էին իրագործել նրանք: Զեռնամուխ լինելով «Մետեորային», Մսերյանն ու Նուպարյանը ցանկանում էին սթանի մը արժանավոր բարեկամներու այլևայլ երկասիրությունները ի մի ամփոփել¹ ու պարբերականը դարձնել ժամանակի ոգուն և Եվրոպայի գիտական շարժման¹ արձագանքը հայ իրականության մեջ: Նրանք գիտեին, որ այդ պլանների իրագործման համար համիդյան ռեժիմի պայմանները չափազանց նեղ էին և սպասում էին այն օրվան, երբ «պարագաները» ներեն տարբեր ձև և ուղղություն տալու պարբերականին: Այդ պարագաները սակայն չներկայացան: Երեք տարվա գոյությունից հետո համիդյան ռեժիմը լծակեց «Մետեորան»: Նրա հրատարակված համարներում սկսված շատ նյութերը, այդ թվում նաև հունական ազգային հերոս Մարկոս Բոցարիսի գլխավորությամբ մղված ազատագրական պայքարին նվիրված ակնարկը, մնացին անավարտ: «Մետեորան» չկարողացավ անդրադառնալ նաև արևմտահայ կյանքի առաջադրած մի շարք հրատապ հարցերի, չբնարկեց արևմտահայ դեմոկրատների ուշադրությանը արժանացած որոշ խնդիրներ (գյուղացիության հարցը, հայ մեծատունների դիմակազերծումը և այլն): Նա չառաջադրեց և 80-ական թվականին չէր էլ կարող առաջադրել սուլթանական թուրքիայի դեմ բացահայտ պայքարի, առավել ևս ռուսացիոն պայքարի լուզումը:

¹ «Մետեորա», 1880, հ. Ա, էջ 3—4.

Ժամանակակիցները բավական բարձր են գնահատել Մսերյանի ու Նուպարյանի հրատարակած «Մետեորայի» գործունեությունը: Պարբերականի երեք վան զալը ողջունել է Հակոբ Պարոնյանը ու նրան «երջանիկ օրեր, հաջողություն, առատ բաժանորդներ և հարատևություն» մաղթել: Արևելյան մամուլը՝ նրա ծրագրի մասին գրել է՝ «ընտիր է այս հատկագիծը», և պարբերականը համարել «իր տեսակի մեջ նշանավոր»²: Վ. Փափազյանը «Մետեորան» դասում է այն պարբերականների թվին, որոնք «դարձան ժամանակակից լավագույն հրատարակությունները և ջանքեր ցույց տվին եվրոպական քաղաքակրթությունը ներմուծելու» համար: Նա հատկապես շեշտում է թխավարամիտ և ծիծաղելիության հասնող կրոնամուլ՝ «Երևակի» դեմ հանդես եկած «արմատական» և «լուրջ» այս հանդեսի հակակղերական ոգին³:

«Մետեորան» տարածվում էր ոչ միայն արևմտահայ շրջաններում, այլև հայաբնակ մյուս վայրերում, մասնավորապես Թիֆլիսում, ուր նա արժանացել է ընդհանուր ուշադրության: Նրա մասին «Արձագանքը» գրում է. «Այս մի լուրջ բովանդակություն ունեցող պարբերական հանդես էր, որ ընդհանուր հայոց ուշադրությունը գրավեց»⁴: Նույն բանն է նշում նաև «Տարազը»: «Դա, — կարդում ենք «Տարազում», — կարճ միջոցում բավականին զգալի կերպով տարածվեց և գրավեց հասարակության ուշադրությունը»⁵:

Մսերյանի և Նուպարյանի պարբերականը, ինչպես նշվեց, փակվել է սուլթանական գրաքննության կողմից: Այդ պարզվում է մի շարք հիշատակություններից: Նախ այդ մասին գրում է Մ. Նուպարյանը թե՛ իր վերոհիշյալ նամակներում⁶ և թե՛ հուշագրություններում: Խոսելով «հրատարակության խափանման» մասին, նա նշում է, որ դրա պատճառը «Համիդի բռնապետական» իշխանությունն էր: Նուպարյանի կենսագիրները «Մետեորայի» մասին խոսելիս ուղղակի շեշտում են, որ այն «կառավարության կողմն խափանվեցավ»: Այդ մասին կան նաև այլ վկայություններ:

Այսպիսով, արևմտահայ երկու մտավորականները՝ Գրիգոր Մսերյանը և Մեսրոպ Նուպարյանը հարել են արևմտահայ 70—80-ական թվականների դեմոկրատական այն հոսանքի ներկայացուցիչներին, որոնք դժվարին և ուրույն

¹ Հ. Պարոնյան, Ընտիր երկեր, հ. 1, էջ 518:

² «Արևելյան մամուլ», 1880, էջ 282—283:

³ Վ. Փափազյան, Թուրքահայ գրականություն, էջ 10 և 11:

⁴ «Արձագանք», 1893, № 103:

⁵ «Տարազ», 1894, № 4, էջ 56:

⁶ Հիշյալ նամակներից բացի ՀՄՄՖ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանում (Զոպանյանի արխիվ) պահպանվում են Մեսրոպ Նուպարյանի մի քանի նամակներն ու գրությունները: Վերջերս, երբ այս հոգվածն արդեն տպագրության էր հանձնված, մեր խնդրանքով Փարիզի Նուպարյան մասնագետների տնօրեն Ա. Սալմասլյանը մեզ ուղարկեց Մեսրոպ Նուպարյանի թանկեղևիկ նամակները, որոնք ուղղված են Հր. Ասաուրին: Դրանցում արժարժվում են թարգմանչական-լեզվական խնդիրներ, շոշափվում են Զմյուռնահայ մշակութային կյանքին. մասնավորապես Վասպուրական թատրոնին, և սփյուռքահայ մի շարք մտավորականների գործունեությունը վերաբերող հարցեր: Այդ նամակներում Նուպարյանը միաժամանակ հաղորդում է կենսագրական հետաքրքրական տվյալներ, պատմում թարգմանչական իր գործունեության, իր երկասիրությունները հրատարակելու դժվարությունների մասին: Այդ նամակները հաստատում են Նուպարյանի մասին սույն հոգվածում արտահայտված դրույթները: Օգտագործելով առիթը մեր շնորհակալությունն ենք հայտնում հարգելի Ա. Սալմասլյանին:

պայմաններում շարունակում էին արևմտահայ 60-ականների ծավալած պայքարը, հանդես գալիս իրրև պրոգրեսիվ հոսանքի ու ազգային նվիրական ձրգտումների գաղափարախոսներու Րրենց գործունեությամբ նրանք արժանացել են ժամանակի պրոգրեսիվ, դեմոկրատական գործիչների գնահատությանը և որողակի հետք են թողել հայ հասարակական մտքի պատմության մեջ: